

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

### 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**



ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը).....	4506 քառ.կմ
ԲՆԱԿԿԶՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ բնակչ.4.7%) .....	139,3 հազ. մարդ
որից քաղաքային.....	94,0 հազար մարդ
գյուղական.....	45,3 հազար մարդ
ԲՆԱԿԿԶՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ .....	30,9 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ .....	8
որից բացառապես գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներ .....	3
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ .....	138
որից սահմանամերձ, լեռնային եւ բարձր լեռնային.....	105
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ.....	472կմ
Իրանի Իսլամական Հանրապետության հետ .....	42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ (Նախիջեւանի Ինքնավար հանրապետություն)	110 կմ
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ .....	ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը զբաղեցնելով հանրապետության տարածքի ավելի քան 15 տոկոսը՝ աչքի է ընկնում հարուստ բնահումքային ռեսուրսներով, բուսական և կենդանական աշխարհի բացառիկ բազմազանությամբ, հնագիտական, պատմամշակութային և բնական հուշարձաններով, որոնք կարևոր նախապայման են տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման համար: Ամենահայտնիներն են Տաթևի վանքը, Որոտնա վանքը, Վահանավանքը, Բղենո Նորավանքը, Երիցավանքը, Թանահատի վանքը, Սիսավանի եկեղեցին, Բաղաբերդը, Երնջակի բերդը, Աղիտուփ դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Զորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Ուղտասարի ժայռապատկերները, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենախոշոր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, «Զանգեզուր» արգելավայրը, «Արևիկ» ազգային պարկը, Մթնածորի անտառը, «Խուստուփ» արգելավայրը:

Օգտակար հանածոներից մարզը հարուստ է երկաթի, գրանիտի, ոսկու, պղնձի, մոլիբդենի, կրաքարի, մարմարի, պերլիտի, մալաքիտի, ավազի հանքային և այլ տեսակի հանքավայրերով: Բնական պաշարների առկայության և շահագործման առումով առավել հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը:

Մարզն ունի հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, բերրի սևահողեր, անտառներ և ալպյան մարգագետիններ:

Մարզին բնորոշ են բարձր գոտիականությունը (միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է շուրջ 2200մ.) և կլիմայական տիպերի մեծ բազմազանությունը՝ մերձարևադարձայինից մինչև մերձբևեռային, խիստ ցուրտ ձմեռներով: Տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում +10 աստիճան է, բարձրադիր վայրերում +6,6 աստիճան:

Մարզի տարածքի մեծ մասը զբաղեցնում են Զանգեզուրի Բարգուշատի, Մեղրիի լեռնաշղթաները և Ղարաբաղի բարձրավանդակը:

Ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է՝ երկրորդը հանրապետությունում (3906մ), ամենացածր կետը ծովի մակերևույթից 375 մետր է (Մեղրիի տարածաշրջան): Խոշոր գետերն են՝ Որոտանը, Ողջին, Մեղրին. բնական և արհեստական ջրավազաններից հայտնի են Կապույտ լիճը, Սև ջուր և Գյուլ-գյուլ լճակները, Շամբի, Տոլրսի և Սպանդարյանի ջրամբարները:

Մարզը, ունենալով արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական և արտադրական (տնտեսական) միավորներից մեկը, դեռևս մնում է համեմատաբար նոսր բնակեցված (բնակչության միջին խտությունը ավելի քան 3,2 անգամ ցածր է հանրապետության՝ չհաշված Երևան քաղաքը, միջին խտությունից), տնտեսապես համեմատաբար թույլ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ընդհանուր և ուրույն հիմնախնդիրներ ունեցող տարածաշրջաններից մեկը:

Մարզում առկա հիմնախնդիրներն առավելապես պայմանավորված են՝

- մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ.
- ուրբանիզացիայի բարձր աստիճանով (բնակչության 67%-ը կենտրոնացված է քաղաքային համայնքներում) և վերջինիս հետ շաղկապված՝ գործազրկության բարձր մակարդակով (մոտ 11,6%-2016թ.), ինչպես նաև բնակչության զգալի մասի ցածր եկամուտներով.
- արտաքին ներդրումների և ենթակառուցվածքների զարգացվածության ոչ բավարար աստիճանով.
- սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային՝ սակավամարդ բնակավայրերի մեծ թվով (80%).

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են /հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալում նախնական տվյալներով մարզի չափաբաժինը կազմում է 13%:/

Բեռնափոխադրումները մարզում իրականացվել են բացառապես ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզում պահպանվում է անհրաժեշտ նախապայմաններ բազմաճյուղ տնտեսության կազմակերպման և զարգացման համար:

## Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

Օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետը ապահովել է ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, հանրապետական գործադիր մարմինների հրամանների, ինչպես նաև նորմատիվ այլ իրավական ակտերի կատարումը:

Ընթացիկ աշխատանքները կազմակերպվել են մարզպետի տեղակալի, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգման միջոցով՝ մարզպետարանի կանոնադրության և աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններին ու աշխատանքային ծրագրերին համապատասխան:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության 134 կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների ավելի քան 60 տարածքային ծառայությունների աշխատանքը:

Մարզպետարանի 2017թ. գործունեության համար հստակեցվել էին մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, դրանց լուծման համար մշակվել անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, դրանք ներառվել են մարզպետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

2017 թվականի աշխատանքային ծրագրերի համաձայն մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթություններն էին՝

- մարզի տնտեսության աճի տեմպերի արագացումը. բնակչության եկամուտների աճը և աղքատության կրճատումը.
- մեկ շնչին ընկնող համայնքների սեփական եկամուտների՝ նախորդ թվականի համեմատ աճի ապահովումը.
- բնակչության զբաղվածության աճի, աշխատատեղերի, կենսագործունեության բարենպաստ պայմանների ստեղծման, արտագաղթի կանխարգելման օժանդակումը.
- գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավումը, փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- քաղաքաշինության ոլորտում առկա խնդիրների թիրախավորումը և համալիր լուծումը.
- գուղատնտեսության արդիականացման և ագրոբիզնեսի զարգացման օժանդակումը.
- շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը.
- որակյալ կրթական, առողջապահական և մշակութային ծառայությունների զարգացման օժանդակումը և դրանց մատչելիության ապահովումը.

- մարզի տարածքում մշակութային և հոգևոր ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- մարզում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության, նրանց բնականոն զարգացման ու սոցիալական ինտեգրացիայի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
- բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի բարձրացումը, հասարակության սոցիալական խոցելի և սահմանափակ կարողություններով խմբերին ծառայությունների թիրախային մատուցումը.
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանն օժանդակումը, մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը.
- սահմանամերձ և սոցիալապես խոցելի համայնքների համար հատուկ օժանդակության ծրագրերի իրականացումը.
- տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացումը՝ հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովմամբ.
- արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
- միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը և նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը.
- հողերի միավորման ծրագրերի և հողի շուկայի ձևավորման աջակցումը.
- արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության պաշտպանության կազմակերպման և իրականացման ապահովումը.
- մարզում և հարակից տարածքներում տեղակայված ՀՀ զինված ուժերի և ՌԴ սահմանապահ զորքերի ստորաբաժանումների հետ համագործակցության իրականացումը, Հայոց բանակի մարտունակության բարձրացմանն օժանդակումը:

Մարզպետարանի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համաձայնեցված համագործակցության, պետական և համայնքային շահերի ներդաշնակ զուգորդման արդյունքում հնարավոր է եղել ապահովել մարզի\_սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանն ու բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացումը:

Կցվում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակը և մարզպետարանի գործունեությունը բնութագրող առանձին ցուցանիշների մասին տեղեկանքը (հավելված N 1):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 3 նիստ (3-րդ եռամսյակում մարզի խորհրդի նիստի նախատեսված՝ վարչատարածքային բարեփոխումների գործընթացի, գյուղական բնակավայրերի հետ հասարակական տրանսպորտի վերագործարկմանն առնչվող, տարածաշրջանում

իրագործվող ծրագրերի և համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին հարցերը քննարկվել են համայնքների ղեկավարների հետ տարածաշրջանային խորհրդակցություններում): Համայնքների, հանրապետական գործադիր մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվել 39 խորհրդակցություն, որից 14-ը՝ արտագնա: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի, կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ապահովության խնդիրներին առնչվող, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, սոցիալական տարբեր ծրագրերի իրագործման, զորակոչի կազմակերպման հետ կապված և այլ հարցեր: Քննարկումների արդյունքներում տրվել են համապատասխան հանձնարարականներ, մշակվել և իրականացվել անհրաժեշտ միջոցառումներ, առանձին հարցերի ու խնդիրների լուծման համար առաջարկություններ ներկայացվել ՀՀ կառավարություն, նախարարություններ և գերատեսչություններ:

Ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովման ուղղությամբ մարզում իրականացվող աշխատանքների ընթացքը, ինչպես նաև ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով օպերատիվ լուծում պահանջող հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում, մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և ծագած խնդիրները լուծելու նպատակով, ՀՀ կառավարությանը և նախարարություններին է ներկայացվել 101 առաջարկություն և միջնորդություն, որից 82-ը լուծում է ստացել, 15-ը ընթացքի մեջ է, մերժվել է 4-ը: Ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման 2 նախագիծ. ընդունվել է 2-ը:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ուսումնասիրությունների և քննարկումների հիման վրա մարզպետի կողմից առաջարկություններ են ներկայացվել մի շարք օրենքների նախագծերում, օրենքներում փոփոխություններ կատարելու և այլ իրավական ակտերի ու նախագծերի վերաբերյալ:

Համակարգված աշխատանք է տարվել մարզում առկա հիմնախնդիրների լուծման առանձին ծրագրային առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ պետբյուջեի 2018թ. նախագծի կազմման և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ:

Մշակվել և ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարությունը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակիորեն նպաստել են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, մրցակցային միջավայրի բարելավմանը, միջմարզային կոոպերացիայի ստեղծմանը, պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացմանը:

Շարունակվում են մարզում (առաջինը ՀՀ և միակը մարզերում) GIS-ի (աշխարհագրական եկրատեղեկատվական համակարգ) հարթակի միջոցով



ենթակառուցվածքների և տնտեսության էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները և համապատասխան ուսումնասիրությունները:

2017թ. դեկտեմբերի 15-ին տրվել է «Մեղրի» ազատ տնտեսական գոտու (ԱՏԳ) գործունեության պաշտոնական մեկնարկը:

Կապանում բացվել է Իտալական՝ «Իտալիան Ֆուդ Քամփնի» ՍՊ ընկերության պիցցայի արտադրամասը (ներդրումների ծավալը՝ 287.0 մլն.դրամ), շահագործման է հանձնվել «Սյունիք Ֆուդ» ՍՊԸ պահածոների գործարանը, մարզկենտրոնում բացվել է Իրանի Իսլամական Հանրապետության «Արաս» ազատ տնտեսական գոտու գրասենյակը:

Սկսվել են օդանավակայանի ուղևորային համալիրի շինարարությունը: Նախատեսվում է ուղևորային համալիրում սպասարկել ժամում մինչև 100 ուղևոր: Զուգահեռ իրականացվում է նաև օդանավակայանի թռիչքուղու վերանորոգում և թռիչքադաշտի համապատասխանեցում ավիացիոն ստանդարտներին:

Ընդհանուր առմամբ օդանավակայանի վերաշահագործման գործընթացներում 2018թ. նախատեսվում է շուրջ 2 մլն ԱՄՆ դոլարի ներդրում, որը հիմնականում իրականացվելու է «Սյունիքի զարգացման և ներդրման» հիմնադրամի և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ միջոցներով: Արդյունքում նախատեսվում է ունենալ 15-25 որակյալ աշխատատեղ:

Օդանավակայանի շահագործման սկզբնական շրջանում նախատեսվում է իրականացնել Կապան-Երևան-Կապան չվերթը:

Արդեն ձեռք է բերվել չեխական արտադրության 1 հատ L-410 տիպի՝ 19 հոգու համար նախատեսված ինքնաթիռ, որի արժեքը կազմում է 5.5 մլն Եվրո, որից 1.5 մլն-ը տրամադրել են Սյունիքի զարգացման և ներդրման հիմնադրամը և «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն, իսկ մնացած 4 միլիոնը լիզինգի տեսքով է, որը կմարվի շահագործումից հետո:

«Կապան մոլ» առևտրի կենտրոնում բացվեց «Մուլտի բրենդ» հանրահայտ ապրանքանիշեր ներկայացնող, տարածաշրջանում դեռևս միակ աուլետ խանութ-սրահը (ներդրումների չափը՝ 20.0 մլն. դրամ):

ԵՄ դրամաշնորհի և ՀՀ կառավարության կողմից տրվող համաֆինանսավորմամբ 2014թ. հայտարարված պիլոտային տարածքային զարգացման ծրագրերի մրցույթում ՀՀ Սյունիքի մարզից ներկայացված 4 հայտերից 3-ը 2016թ. դեկտեմբերին հաղթող ճանաչվեցին փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման (տուրիզմ, սննդի վերամշակում), բնապահպանության, գյուղատնտեսության (սննդի վերամշակում) և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում, որոնց իրականացման ուղղությամբ աշխատանքները սկսվեց 2017թ.:

Շարունակվել է միջազգային կառույցների, բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների հետ ակտիվ համագործակցությունը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով տարվա ընթացքում տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջոցով, ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները, նախնական տվյալներով իրականացվել են շուրջ 44.74 մլրդ. դրամի զարգացման, ներդրումային և վարկային ծրագրեր (հավելված N 2):

Մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է եղել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը աջակցելը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսներ, չեն պահանջում խոշոր ներդրումներ և աշխատատեղեր են ապահովում համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Նշված խնդիրների լուծման, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով, ՀՀ կառավարության որոշմամբ, ստեղծվել է «Սյունիքի մարզի զարգացման և ներդրման» հիմնադրամը:

Մարզպետարանի 2017թ. գործունեության համար հստակեցվել էին մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, դրանց լուծման համար մշակվել անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, մարզպետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

Իրականացվել են մոտ 32.15 մլրդ դրամի զարգացման, փոքր և միջին բիզնեսի աջակցման նպատակով՝ 12.56 մլրդ. դրամի վարկային (ՓՄՁ և գյուղատնտեսական) ծրագրեր:

Մարզի տնտեսության զարգացման համար էական ներդրումներ են իրականացվել, մասնավորապես՝

-«Հանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցներով մարզում կատարվել են շուրջ 20,4 մլրդ դրամի ներդրումներ,

-«Սյունիքի զարգացման և ներդրման հիմնադրամի» միջոցներով մարզում կատարվել են շուրջ 389,1 մլն դրամի ներդրումներ,

-«Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցներով մարզում իրականացվել են շուրջ 1,8 մլրդ դրամի ներդրումներ,

-«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի միջոցներով մարզում իրականացվել են շուրջ 12,0 մլրդ դրամի ներդրումներ,

-Սյունիքի մարզպետարանի և ՇՁՀԳ-ի հետ հաստատվել և «Ռեզնավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի միջոցով 2017թ. իրականացվել է Գորիսի և Սիսիանի տարածաշրջանների համայնքներում անասնապահության զարգացման ծրագիրը՝ 230.0 մլն դրամի չափով.

-«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի միջոցներով մարզի համայնքներում իրականացվել է գյուղական զարգացման ծրագրեր շուրջ 3,5 մլն դրամ ընդհանուր գումարով.

-«Վորլդ Վիժն» ՄԲԿ միջոցով Կապանի, Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում 2017թ. իրականացվել են 360.0 մլն դրամի առողջապահական, կրթական, մշակութային մի շարք ծրագրեր.

-«Իստեյտ մենեջմենթ ենդ ադմինիստրեյշն քամփնի» ՓԲԸ միջոցներով 2017 թվականին մարզում իրականացվել են 184,3 մլն դրամի ծրագրեր:

-Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով 2017 թվականին մարզում իրականացվել են 299,2 մլն դրամի ծրագրեր:

-ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ԾԻԳ ՊՀ միջոցներով մարզում իրականացվել են շուրջ 2.2 մլրդ դրամի ներդրումներ:



-Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական աջակցություն ծրագրի շրջանակներում տրամադրվել է 16,6 մլն դրամի վարկ:

2017թ. ընթացքում մարզում ստեղծվել են 37 նոր կազմակերպություններ (որից 26-ը Ա/Ձ)՝ 140 աշխատատեղով: 2017թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզում առկա է 13697 աշխատատեղ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի կողմից ուսումնասիրվել են մարզային ենթակայության 13 կազմակերպությունների ղեկավարների ընդունած իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին և կազմվել համապատասխան արձանագրություններ:

Ուսումնասիրվել է մարզի քաղաքային և գյուղական համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 1593 որոշում, որից՝ 1109-ը՝ անհատական, 484-ը՝ նորմատիվ: Դրանց՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 402 եզրակացություն:

2017թ-ի ընթացքում աուդիտի է ենթարկվել մարզային ենթակայության կրթական ոլորտի 51 ՊՈԱԿ, առողջապահական ոլորտի 11 ՓԲԸ, մարզպետարանի աշխատակազմի 5 ստորաբաժանում: Աուդիտի ընթացքում պարզվել է, որ ՀՀ օրենքների, նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման ուղղությամբ կան թերացումներ, բացթողումներ, հատկապես գնումների, հաշվապահական հաշվառման ստանդարտների ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման ուղղությամբ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ աուդիտի միավորներին ցուցաբերվել է խորհրդատվական անհրաժեշտ օգնություն, տրվել հանձնարարականներ:

2017 թվականին մարզպետարանի հաստիքային միավորների թիվը 143 էր, որից 115-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ:

Քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել առաջարկություններ քաղաքացիական ծառայության անվանացանկում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի վերաբերյալ, կազմվել թեստավորման և հարցազրույցի փուլերի համար հարցաշարեր, կատարվել համապատասխան փոփոխություններ քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում:

Ապահովվել է քաղծառայողների մեկ երրորդի վերապատրաստումը:

2017թ. ընդունվել է մարզպետի 143 որոշում, արձակվել 288 կարգադրություն, որոնք ուղղված են եղել ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների կատարման ապահովմանը, հանրապետական գործադիր մարմինների, նրանց տարածքային ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերի լուծմանը, մարզային ենթակայության կազմակերպությունների ու մարզպետարանի գործունեության բարելավմանը:

ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներին ու հանձնարարականներին, ընդհանուր առմամբ, սահմանված կարգով և պահանջվող ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

2017 թվականին առաքվել է 9130 փաստաթուղթ, մարզպետարան մուտքագրվել՝ 13112 թղթակցություն, այդ թվում՝ ՀՀ Նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ Ազգային ժողովից՝ 4, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 1, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 1349, ՀՀ նախարարություններից և

գերատեսչություններից՝ 1308, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 3020, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 3513, գաղտնի թղթակցություն՝ 29, քաղաքացիներից՝ 3882 դիմում: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 8, ՀՀ Ազգային ժողովից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 115, նախարարություններից՝ 23, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից 3 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել, կատարվել է նաև դրանց վերլուծությունը (կցվում է տեղեկանքը, հավելված N 3):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2018 թվականի նախնական աշխատանքային ծրագիրը, ընդունվել ի գիտություն: Ավարտվել է 2017 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականների գնահատման գործընթացը:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017թ. ընթացքում կատարվել է 961 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ Նախագահի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

## **Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր**

2017 թվականին մարզի 19 համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ՝ համաձայն հաստատված աշխատանքային ծրագրի:

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվել են, օրենքով սահմանված գործառույթների իրականացումը համապատասխանեցվել է օրենսդրության պահանջներին: Կատարված

աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզպետը 2017 թվականին ապահովել է ՀՀ ընտրական օրենսգրքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ԱԺ 2017 թվականի ապրիլի 2-ին անցկացված համապետական ընտրությունների և մարզի Գորիս ու վարչատարածքային վերջին բարեփոխումների արդյունքում նոր կազմավորված Կապան, Սիսիան և Քաջարան բազմաբնակավայր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների 2017 նոյեմբերի 5-ին կայացած ընտրությունների հետ կապված գործառույթների իրականացումը՝ ընտրությունների նախապատրաստման ու անցկացման աշխատանքների մասով: Կազմակերպական օժանդակություն է ցույց տվել համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման ու անցկացման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն, ինչպես նաև դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ:

Աշխատանքներ են տարվել Սյունիքի մարզում համայնքների խոշորացման գործընթացի պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ: Խոշորացման արդյունքում մարզում համայնքների թիվը 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 8, որից Կապանի տարածաշրջանում՝ 2, Գորիսի տարածաշրջանում՝ 3, Սիսիանի տարածաշրջանում՝ 2, Մեղրու տարածաշրջանում՝ 1:

Մեթոդական և խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել նախկին համայնքների լուծարման և նոր համայնքների ձևավորման ու կայացման գործընթացներին, նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների ստանձնման ու գործունեության կազմակերպման հարցերում:

Աջակցություն է ցուցաբերվել նոր ստեղծված խոշորացված համայնքներում համայնքապետարանների աշխատակազմերի կազմավորման և օրենքով սահմանված մյուս գործընթացների ապահովման աշխատանքներին:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում լուծում է տվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ է ներկայացրել ՀՀ կառավարություն և ՀՀ նախարարություններ:

Համագործակցելով համայնքային ծառայության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ, համակարգված աշխատանքներ են տարվել համայնքապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացման ուղղությամբ:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոններ համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը: Թափուր պաշտոնների համալրման նպատակով 2017 թվականի ընթացքում կայացել է 90 մրցույթ:

Ընթացիկ տարում նախատեսված էր ատեստավորել 71 և վերապատրաստել 91 համայնքային ծառայողների, սակայն վարչատարածքային վերջին բարեփոխումներն ի նկատի ունենալով գործընթացը նպատակահարմար չի համարվել իրականացնել:

Մարզպետարանը 2017 թվականին աշխատանքներ է տարել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների

կատարելագործման նպատակով նրանց հետ, ըստ տարածաշրջանների, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից պարբերաբար անց են կացվել ուսուցողական բնույթի խորհրդակցություններ:

Մարզի բոլոր 8 համայնքներն ապահովված են համակարգչային տեխնիկայով և համացանցային կապով, @mta.gov.am տիրույթի էլեկտրոնային փոստարկղներով, համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերով, ունեն համացանցային պաշտոնական կայքեր:

Մարզի համայնքներում հանրային իրազեկման գործընթացն արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով ձեռնարկվել են միջոցներ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքների պահանջների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման, ինչպես նաև համայնքներում հանրային իրազեկման գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Մարզպետարանի կայքում հրապարակվել են 2017 թվականի ընթացքում մարզպետարան առաքված, համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումները: Համայնքներում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջներին համաձայն տեղեկատվական վահանակների միջոցով ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը: Մշտական հսկողություն է իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման նկատմամբ և սահմանված պարբերականությամբ արդյունքները ներկայացվում են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մեթոդական, խորհրդատվական և կազմակերպական օգնություն է ցուցաբերվել համայնքներին՝ զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներում:

## **Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանն առնչվող հարցեր**

Մարզպետը համագործակցել է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ՝ ապահովելով համապատասխան բնագավառներում ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության ու վարչապետի որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը, իրականացրել դրանցից բխող անհրաժեշտ կառավարչական ու կազմակերպչական գործառույթներ:

Մարզպետը, որպես մարզի զորահավաքային մարմնի և զորակոչային հանձնաժողովի նախագահ, իր իրավասությունների շրջանակներում, հրավիրել է խորհրդակցություններ, հանձնաժողովի նիստեր, ընդունել որոշումներ և տվել հանձնարարականներ, համապատասխան տարածքային ծառայությունների, համայնքների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրել զինապարտների հաշվառման, զորակոչի և զորավարժությունների կազմակերպման ապահովման վրա: Տարածքային զինկոմիսարիատների, ոստիկանության մարմինների, համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել զորակոչից խուսափող անձանց հայտնաբերելու և զորակոչելու ուղղությամբ:

ՀՀ Սյունիքի մարզում նախագորակոչային կցագրման ենթակա են եղել 2001 թվականին ծնված 824 պատանի, որից կցագրվել են 735-ը, չեն կցագրվել 89-ը՝ հիմնականում Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելու պատճառով:

Կցագրման 2017 թվականի ցուցանիշը կազմել է 89.2 %:

Կատարվել են ամառային զորակոչի պլանային առաջադրանքները /101,5%/, իսկ ձմեռային զորակոչն ընթացքի մեջ է:

Ռազմաուսումնական հաստատություններում սովորելու համար մարզի տարածքային զինկոմիսարիատներից առաջադրվել էր 23 դիմորդ-թեկնածու, ընդունվել են 19-ը (82,6%):

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության հետ լրամշակվել են ՀՀ Սյունիքի մարզի և 72 համայնքների քաղաքացիական պաշտպանության, բնակչության տարահանման և պատսպարման, քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պլանները:

2017 թվականին մարզում գրանցվել է արտակարգ իրավիճակների 788 դեպք (2016թ.՝ 619), որից տեխնածին՝ 719 (2016թ.՝ 516), հրդեհներ՝ 413 (տուժել՝ 4 մարդ), ճանապարհատրանսպորտային՝ 72 դեպք, որի հետևանքով զոհվել է 19 մարդ, վիրավորվել՝ 82 մարդ (2016թ.՝ ՃՊՏ-ի 76 դեպք, զոհվել է 17, վիրավորվել՝ 86 մարդ), տարերային արտակարգ իրավիճակների՝ 56 (2016թ.՝ 78) մերկասառույցի՝ 23, երկրաշարժի՝ 5, սողանքի՝ 2, քարաթափման՝ 9, փլուզման՝ 6 դեպք: Մարզում արտակարգ դեպքերի թիվը 2016 թվականի համեմատությամբ աճել է 169-ով:

Մարզի բնակչության պաշտպանության ոլորտին առնչվող միջոցառումներն իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզպետի 2017 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» №11-Ա որոշման համաձայն: Սահմանված կարգով հաստատվել են մարզում 2017 թվականին հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու, վերացնելու նպատակով մարզային հանձնաժողովի անհատական կազմը և կանխարգելիչ միջոցառումների պլանը: Մարզպետի համապատասխան որոշումներով 2017 թվականի ընթացքում անց են կացվել 1 հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, 34 շտաբային վարժություն, 2 օբյեկտային վարժանք, 10 հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, 30 գյուղական համայնքներում՝ շտաբային ուսումնավարժություններ:

Մարզպետարանը ակտիվ համագործակցել է նաև ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ, մարզային թիմերը մասնակցել են աղետների ռիսկերի նվազմանն ուղղված ուսուցողական և մյուս միջոցառումներին:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում, ըստ տարեկան աշխատանքային պլանի, վերապատրաստվել են մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական և այլ կազմակերպությունների 51 աշխատակիցներ:

Մարզպետն իր իրավասությունների սահմաններում համակարգել է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության տարածքային մարմինների գործունեությունը հասարակական կարգի պահպանության,

կազմակերպված հանցավորության և թմրամոլության, զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի աշխատանքներում, օժանդակել հանցագործությունների կանխման միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված կարգով կատարմանը:

Մարզի տարածքում 2017 թվականին արձանագրվել է հանցագործության 612 դեպք, նախորդ տարվա 638-ի դիմաց, բացահայտումը կազմել է 90%:

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ կատարված աշխատանքների ընթացքում արձանագրվել են թմրանյութի ապօրինի շրջանառության 50 դեպք, որից 16-ը իրացման նպատակով: «Կանեփ-Կակաչ» միջոցառման շրջանակներում ոստիկանության Սյունիքի մարզային վարչության

ենթակա բաժինների ծառայողների, տեղական ինքնակառավարման մարմինների ու տարածքի զորամասերի զինծառայողների հետ մարզի վարչական տարածքից հայտնաբերվել և այրման միջոցով ոչնչացվել են 2670 կգ վայրած կանեփի թփեր: ՀՀ ոստիկանության մարզային վարչության և տարածքային բաժինների կողմից պատշաճ ծառայություն է իրականացվել հասարակական կարգի պահպանման ուղղությամբ: Մարզում իրականացվել են 211 միջոցառումներ՝ ընդհանուր 758 ժամ տևողությամբ:

Կատարված աշխատանքների արդյունքները և նշված ոլորտում իրավախախտումները կանխելու անհրաժեշտ միջոցառումների իրականացման խնդիրները համապատասխան մարմինների մասնակցությամբ պարբերաբար քննարկվել են մարզպետի մոտ և կայացվել են համապատասխան որոշումներ:

Մարզպետն իր լիազորությունների շրջանակներում 2017 թվականին անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել պետական սահմանի պահպանության, սահմանապահ ուժերի մարտունակության և օպերատիվության բարձրացման, սահմանապահ ուժերի և սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության բարելավման ուղղությամբ:

Սերտ համագործակցություն է հաստատվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ ՊՆ և ՌԴ ՊՆ՝ մարզի տարածքում տեղակայված զորամասերի միջև:

Ուշադրության կենտրոնում են եղել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ինչպես նաև սոցիալապես կարիքավոր ընտանիքների խնդիրները: Այդ ընտանիքներին պարբերաբար ցուցաբերվել է նյութական օժանդակություն:

Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական պետական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի կողմից կիրառված միջոցառումների արդյունքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել մոտ 8.4 մլն դրամ:

Արձանագրվել են զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքեր, բացահայտումը կազմել է 87,2%:

Ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ապօրինի ծառահատման, հողազավթումների և որսագողության դեպքերի կանխման նպատակով մարզպետի կողմից մարզպետարանի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, բնապահպանության պետական տեսչության, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների



ներգրավմամբ ստեղծվել են աշխատանքային խմբեր և անցկացվել ստուգայցեր, որի արդյունքում բացահայտվել է ձկնաարդյունահանման 3 դեպք, ապօրինի անտառահատման 11 դեպք, ապօրինի որսի 2 դեպք, շինարարության ոլորտում արձանագրվել է իրավախախտման 3 դեպք:

Մարզում իրականացվել է անշարժ գույքի 1159 օտարման գործարք, որից 391-ը՝ հողի օտարման:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտ աշխատանքներ են տարվել նաև հանրապետական գործադիր մարմինների մյուս տարածքային ծառայությունների հետ՝ ապահովելով նրանց, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների փոխադարձ կապը և համագործակցությունը:

### Մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն ըստ բնագավառների Ֆինանսական բնագավառ

Մարզպետն իր լիազորությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառների և ծրագրերի գծով նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

2017 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.


Ֆինանսավորման ոլորտը	2016թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	2017թ. նախատեսված գումարը (հազ. դրամ)	2017թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	Կատարումը (%)
<b>ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ</b>	<b>522482.79</b>	<b>515948.3</b>	<b>513359.849</b>	<b>99,5</b>
<b>Կրթություն, այդ թվում</b>	<b>4530715.3</b>	<b>4597212.3</b>	<b>4597164.4</b>	<b>100</b>
Հանրակրթական ուսուցում	4237853.6	4480019.2	4480018.9	100
Հատուկ կրթություն	109569.8	0	0	
Ներառական կրթություն	68949.4	0	0	
Նախադպրոցական կրթություն	10210.8	8662.8	8662.8	100
Արտադպրոցական դաստիարակություն	70351.6	69763.0	69763.0	100
Մանկավարժների և դպր. երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	25800.5	30000.5	30000.5	100
Ատեստավորման միջոցով տարրակարգ ստացած ուսուցիչներին	7979.6	8766.8	8719.2	99.5

հավելավճարի տրամադրում				
<b>Մշակույթ, այդ թվում</b>	<b>138321.4</b>	<b>138173.9</b>	<b>138173.9</b>	<b>100</b>
Թանգարանային ծառայություններ	14903.8	14888.7	14888.7	100
Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	2976.2	2993.2	2993.2	100
Թատերական ներկայացումներ	72192.4	72043.0	72043.0	100
Մշակութային միջոցառումներ	7171.7	7171.7	7171.7	100
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	41077.3	41077.3	41077.3	100
<b>Պետ. աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին</b>	<b>185808.2</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>Կրթական օբյեկտների շինարարություն</b>	<b>31079.8</b>	<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	57474.3	3362.3	2586.5	77.0
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	32249.1	0	0	0
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ	88519.9	353249.6	344281.7	97.5
Ավտոճանապարհների պահպանում և շահագործում, ձմեռային պահպանում	116000.0	138360.0	138360.0	100
Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	1710.0	825.0	825.0	100
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	199287.0	238320.0	194492.1	81.6
Դոտացիա	2543997.0	2708105.9	2708105.9	100
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>8448644.8</b>	<b>8693557.3</b>	<b>8637349.3</b>	<b>99.4</b>

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, շտապ օգնության, ամբուլատոր-պոլիկլինիկական, և նեղ մասնագիտական /հոգեբուժական/ դիսպանսերային ծրագրերով նախատեսված բազային ծավալը 2017թ. կազմել է 2, 14 մլրդ դրամ, առողջապահության գործակալության կողմից ընդունված 2.1մլրդ դրամ կատարողականը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2017թ. մարզի 72 համայնքներին նախատեսված 2.7 մլրդ դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեների կատարման ընթացքն ըստ հարկատեսակների հետևյալն է.



	Հողի հարկ	Գույքահարկ	Պետական տուրք	Գույքի վարձակալություն	Տեղական տուրք	Հողի վարձակալություն	Այլ մուտքեր	Դոտացիա
Նախատեսված	181159.2	407226.9	21646.0	20316.1	77523.7	585118.1	204901.2	2708105.9
Փաստացի	184858.9	435863.5	24428.5	21992.5	78865.7	579510.5	208605.9	2708105.9


Դոտացիաները հիմնականում նպատակաուղղվել են տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Օրենսդրությամբ վերապահված պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացմանը»:

Համայնքների բյուջեները ընդհանուր եկամուտների մասով կատարվել են 100.4%, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 102.4%: Բնակչության մեկ շնչի հաշվարկով համայնքների սեփական եկամուտները կազմում է 11.8 հազ.դրամ, իսկ աճը 2016 թվականի համեմատ՝ 19.7 %:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 1.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 11.0%, գույքահարկինը՝ 25.9%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 35.7%:

Ցուցանիշներ			
Համայնքների եկամուտները, այդ թվում	Նախատեսված ընդամենը եկամուտներ	2015թ.	4551455.4
		2016թ.	4434800.3
		2017թ.	4784689.9
Համայնքների ընդամենը եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը %/	ընդամենը	
		2015թ.	99.2
		2016թ.	99.1
		2017թ.	100.4
Սեփական եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը %/	ընդամենը	
		2015թ.	100.7
		2016թ.	101.2
		2017թ.	102.4

Համայնքների բյուջեներով իրականացված ծախսերն ունեն հետևյալ պատկերը.



2017թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել մարզի 72 համայնքների բյուջեների ամփոփը: Կազմվել և գլխադասային մարմիններին են ներկայացվել 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը: Պարբերաբար իրականացվել են մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող ծրագրերի գծով ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման, հաշվետվությունների ներկայացման, համայնքների բյուջեների կատարման, աշխատավարձերի վճարման համայնքների բյուջեներին տրվող հատկացումների նպատակային օգտագործման ուղղությամբ: Գանձապետական հաշիվների էլեկտրոնային կառավարման «Քլիենթ-Թրեժրի» ծրագրային համակարգով կատարվել են մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով առկա ծախսերի ֆինանսավորման և վճարման, կնքված պայմանագրերի հաշվառման և փորձաքննության ներկայացման ամենօրյա գործառույթներ:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման գործընթացներ:

Տեղական ինքնակառավարման մարմիններից հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների, ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալները

ՀՀ Սյունիքի մարզպետարանի կարիքների համար 2017թ-ին կազմակերպվել է թվով 45 գնման ընթացակարգ, որոնց արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը հաշվառվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից: Ընդհանուր առմամբ խնայվել է 3.51մլն. դրամ:

Ըստ ծրագրերի գործառնական դասակարգիչների գնման գործընթացների արդյունքները ներակայցվում է ստորև՝ աղյուսակի տեսքով:

Ծրագրի գործառնական դասակարգիչ	Գնման ընթացակարգերի քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի արդյունքում խնայված գումարներ (հազար դրամ)
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	32	32	2588.45
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ և կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	13	32	924.92
<b>Ընդամենը</b>	<b>45</b>	<b>64</b>	<b>3513.37</b>

### Արդյունաբերություն


Մարզի տնտեսության առանցքային ճյուղը արդյունաբերությունն է: Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում թողարկված արտադրանքի ծավալը 2017 թվականին՝ նախնական տվյալներով, ընթացիկ գներով կկազմի շուրջ 277,1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ կաճի (համադրելի գներով) մոտ 15.0%-ով:

Իրացվել է ավելի քան 268.5 մլրդ դրամի պատրաստի արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 1.13 մլրդ դրամ, այլ երկրներում՝ 215.0 մլրդ դրամ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալում գերակշիռ մաս է կազմում հանքագործական արդյունաբերական արտադրանքը՝ նախնական տվյալներով (ընթացիկ գներով) մոտ 215.8 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 80.4%-ը:

Առկա հումքային, տեխնոլոգիական, կադրային ներուժի և իրացման կայուն շուկայի առկայության պայմաններում այս ճյուղը մարզի տնտեսության մեջ տևական ժամանակ կպահպանի իր առաջնային դերը:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալների բաշխվածությունը 2017 թվականին՝ ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը.



2017 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի մոտ 13.0%-ը բաժին է ընկել Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին:

Նախորդ տարվա համեմատ, 2017 թվականին մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության ծավալների՝ նախնական տվյալներով շուրջ

15.0%-ով աճը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության աճով՝ մետաղական հանքաքարերի արդյունահանման՝ մոտ 11.6%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման 48.2% աճով, իսկ մշակող արդյունաբերության մեջ գրանցվել է 1.8% նվազում:

2017 թվականին մարզում նախնական տվյալներով արտադրվել է մոտ 1.33 մլրդ. կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որը 2016 թվականի նույն ժամանակաշրջանի ցուցանիշի նկատմամբ կազմել է 96.6%: Մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմում է հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի շուրջ 17.6%-ը, հիդրոէլեկտրակայաններում ստացվածի՝ շուրջ 58.1%-ը:

2017 թվականին մարզում սպառված գազի ծավալը կազմել է շուրջ 49.28 մլն խոր. մետր կամ շուրջ 0.6 %-ով ավելի, քան նախորդ տարում: Բաժանորդ բնակիչների թիվը կազմել է 25157 (նախորդ տարվա համեմատ 1.17%-ով ավելի), իսկ կազմակերպություններինը՝ 454 (նախորդ տարվա համեմատ 3.4%-ով ավելի): Բնակչության կողմից սպառված գազի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 32.25%:

**Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ**


2017 թվականի ընթացքում մարզում իրականացվել են 3.72 մլրդ. դրամի համաշինարարական աշխատանքներ: Կատարված աշխատանքների ընդհանուր ծավալից 866.0մլն. դրամը նպատակաուղղվել է կապիտալ շինարարությանը, 2.934 մլրդ. դրամը՝ հիմնանորոգմանն ու վերանորոգմանը:

Իրականացված աշխատանքների 18.5 %-ը կատարվել է պետական բյուջեի, իսկ 71.5 %-ը՝ ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

Աշխատանքների ընդհանուր ծավալից 5.46%-ը ուղղվել է ջրամատակարարման համակարգերի, 8.62%-ը՝ ոռոգման ցանցերի, 7.19%-ը՝ դպրոցների, 1.22%-ը՝ նախադպրոցական, 0.27%-ը առողջապահական, 8.07%-ը՝ մարզական հիմնարկների, 4.43%-ը՝ վարչական շենքերի, 4.66%-ը՝ բնակֆոնդի և 1.92%-ը՝ մշակութային օբյեկտների կառուցմանն ու հիմնանորոգմանը, իսկ 58.14%-ը՝ այլ ծրագրերի իրականացմանը:

**Մարզում իրականացված քաղաքաշինական ծրագրերի ծավալներն ըստ ուղղվածությունների բնութագրվում են հետևյալ կերպ**





1	Դպրոցական շենքերի հիմնանորոգում. կառուցում, վերանորոգում	267.0 մլն դրամ
2	Մարզական հիմնարկների հիմնանորոգում	300.0 մլն.դրամ
3	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	71.25 մլն.դրամ
4	Նախադպրոցական օբյեկտների հիմնանորոգում	45.3 մլն.դրամ
5	Ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում	203.0 մլն.դրամ
6	Ոռոգման համակարգերի հիմնանորոգում	320.1 մլն.դրամ
7	Առողջապահական հիմնարկների վերանորոգում	10.1 մլն.դրամ
8	Բնակարանային ֆոնդի վերանորոգում	173.0մլն.դրամ
9	Վարչական օբյեկտների հիմնանորոգում	165.6 մլն դրամ
10	Այլ ենթակառուցվածքներ	2160.4 մլն.դրամ
<b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը</b>		<b>3716.1 մլն.դրամ</b>

«ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 17-ի N 153-Ն, մայիսի 18-ի N 571-Ն. օգոստոսի 24-ի N 1070-Ն որոշումներով քաղաքաշինության բնագավառում 2017 թվականին Սյունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով 67.75 մլն դրամով հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել Մեղրիի թիվ 1, Հացավան, Սպանդարյան համայնքների և Սիսիանի թիվ 2 դպրոցներում, 79.18 մլն դրամով վերանորոգվել է Կապան, Սիսիան և Շինուհայր համայնքների 15 բազմաբնակարան շենքերի տանիքներ, 34.17 մլն դրամով՝ վերանորոգվել է Կապան համայնքի 31 վերելակ, 16.9 մլն դրամով հակասողանքային միջոցառումներ է կատարվել Կապան համայնքի Շինարարների թաղամասում:

«Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի ֆինանսավորմամբ 53.3 մլն դրամով ավարտվել է

2016թ սկսված Տաթև. Լոր, Կարճևան համայնքների ջրամատակարարման, և 238.87 մլն դրամով Ավվանք, Մեղրի, Ագարակի, Շվանիձոր-Նոնաձոր ոռոգման համակարգերի վերակառուցման աշխատանքները:

Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցների հաշվին 301.4 մլն դրամով ավարտվել են 2016թ սկսած Խնձորեսկի, Ախլաթյան Ակների Որոտանի (Գորիս) համայնքների խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարների կառուցման, 68.7 մլն դրամով Կապանի արվեստի դպրոցի վերակառուցման աշխատանքները, սկսվել է 1300.0մլն դրամ պայմանագրանային արժեքով Կապանի թիվ 7 դպրոցի կառուցումը (կատարված է 146.68 մլն դրամի աշխատանքներ):

«Սյունիքի մարզի զարգացման և ներդրման» հիմնադրամի կողմից ոլորտում իրականացվել է մոտ 90.0 մլն.դրամի ներդրումային ծրագրեր:

2017 թվականի ընթացքում համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել շինարարություն իրականացնելու նպատակով հողհատկացման 22 առաջարկություններ, որոնցից 12-ին տրվել է դրական լուծում, 7-ը մերժվել է, 3-ը ընթացքի մեջ է:

Համայնքների ղեկավարների կողմից 2017թ. տրվել է 153 շինարարության, 3 քանդման և 71 շինարարության շահագործման փաստագրման ակտ:

Որոշակի աշխատանքներ են կատարվել ինքնակամ շինարարության հայտնաբերման, կանխարգելման և կասեցման ուղղությամբ: 2017 թվականին մարզի 19 համայնքներում քաղաքաշինական գործունեության ոլորտում իրականացվել են վարչական ստուգումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ տրվել են համապատասխան ցուցումներ:

Համակարգված աշխատանքներ են տարվել աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման ուղղությամբ: Մայիսին մարզի տարածքում գույքագրած 137 աղբավայրերը մինչև տարեվերջ վերացվել է 83-ը: Տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի թիվը 1620-ից հասցվել է 1862-ի: Մշակվել է մարզում աղբահանության և սանմաքրման ծրագրի հայեցակարգը: Աղբահանության և սանիտարական մաքրման ինքնաձախսաձածկման ուղղությամբ կիրառված միջոցառումների շնորհիվ 2016 թվականի եկամուտ-ծախս հարաբերակցությունը 45.2 % ի դիմաց 2017 թվականին կազմել է 51.7%: Որոշակի աջակցություն է ցուցաբերվել կոմունալ ծառայությունների դիմաց կատարված ծախսերի դասակարգման, վարձավճարների հավաքագրման գործում: Համայնքներին տրամադրվել է տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանագրերի կնքման մեթոդական ուղեցույց:

Համապետական 3 շաբաթօրյակի կազմակերպումը և անցկացումը ներառել է մարզի բոլոր համայնքները և բնակավայրերը:

Տարվա ընթացքում սահմանված կարգով կատարվել են զոհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները: Բնակարանի գնման վկայագիր ստանալու համար դիմած 11 շահառուներին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով տրամադրվել են համապատասխան վկայագրեր, 6 ընտանիք վերցվել հաշվառման:

Կազմվել են ՀՀ Սյունիքի մարզի քաղաքաշինության ոլորտի 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը, որոնք համաձայնեցման նպատակով ներկայացվել են համապատասխան նախարարություններ:

**Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ**

«Սյունիքի մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տարբեր նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը, կազմում է 1041.05 կմ, այդ թվում միջպետական՝ 359.6 կմ, հանրապետական՝ 166.25 կմ և մարզային նշանակության՝ 515.2 կմ:

Տարվա ընթացքում որոշակի աշխատանքներ են կատարվել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման ու պահպանման ուղղությամբ:

«Այլ տարածքային բյուջեով և տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2017 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և 'այլ կազմակերպությունների կողմից, ընդհանուր առմամբ, իրականացվել է ավելի քան 2,5 մլրդ դրամի աշխատանքներ, այդ թվում տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման համար՝ մոտ 1.6 մլրդ. դրամ, իսկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության համար 983,1 մլն դրամ:

Համաշխարհային բանկի միջոցներով 2017 թվականին իրականացվել են Մ-2 Սիսիանկմ0+000-կմ5+873 իշխանասար-Սիսիան ավտոճանապարհի հիմնանորոգման համար 153.7 մլն.դրամի աշխատանքներ:

«Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին միջպետական, հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար կատարվել է 844.8 մլն.դրամի աշխատանքներ:

Ավարտվել են Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման կմ 168+000- կմ 219+000, 248+000, կմ 254+000 հատվածների անցանելիության ապահովման 63,2 մլն. դրամի, Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման կմ283+200- կմ284+400 և կմ289+650-կմ291+450, կմ289+650-կմ291+450, կմ228+000,կմ235+000 և կմ342+400-կմ347+000 ճանապարհահատվածների միջին նորոգման՝ 688.9 մլն. դրամի, Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ180+938-կմ181+381 հատվածի հիմնանորոգման և ջրահեռացման ապահովման՝ 92,3 մլն. դրամի, ա/ճ Մ-2 Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման կմ358+025 հատվածում կամուրջի կառուցում՝ 44,7 մլն. դրամի աշխատանքները:

Արհեստական կառույցների պահպանության և շահագործման (Արաքս գետի Մեղրիի կամուրջ) և Մ-2 ճանապարհի նշագծման համար ծախսվել է 52,2 մլն դրամ:

Մարզպետարանի պատվիրատվությամբ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին մարզում իրականացվել են Արավուս համայնք մտնող կամրջի վերակառուցման՝ 25.4 մլն. դրամի, Կապան համայնքի Հալիձոր,Բաղաբերդ և Ձորք թաղամասերի ասֆալտապատման և բարեկարգման՝ 49.8 մլն. դրամի և մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման և շահագործման գծով՝ 138,4 մլն. դրամի աշխատանքներ:

Ոչ պետական միջոցներով 2017 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել է շուրջ 398.1 մլն. դրամի աշխատանքներ:

Պատշաճ հսկողություն է իրականացվել մարզի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհներին հարող տարածքների սանիտարական մաքրման կազմակերպման աշխատանքներին:

Հասարակական տրանսպորտի աշխատանքներն անվտանգ կազմակերպելու և բարելավելու նպատակով ներմարզային 6 երթուղիներում ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար կազմակերպվել և սահմանված կարգով անց են կացվել նոր մրցույթներ:

### **Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ**

2017թ. ընթացքում մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 18050 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ: Գյուղատնտեսական մթերքներ (կաթ, միս, հացահատիկ/ վերամշակմամբ և արտադրությամբ զբաղվում են 60, այդ թվում, կաթի վերամշակմամբ՝ 30, մսամթերքի արտադրությամբ՝ 6, մրգի և բանջարեղենի պահածոյացմամբ ու վերամշակմամբ՝ 24 գյուղատնտեսական կազմակերպություններ:

Մարզի 306,7հազ. հա գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահողերը կազմում են 43.8 հազ.հա, կամ 14.3%-ը. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից ցանքատարածությունների տակ է դրվել և օգտագործվել 24.7 հազ.հա: Օգտագործված վարելահողերից հացահատիկային մշակաբույսերի չափաբաժինը կազմում է 16337 հա, այդ թվում, աշնանացանը՝ 11058հա, գարնանացանը՝ 5278.7 հա:

Կարտոֆիլի ցանքատարածությունները կազմել է 1670հա, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 1046հա, կերային մշակաբույսերինը (կորնզան, առվույտ և այլն) 5379հա, բազմամյա տնկարկներ (այգիներ) 2382.9 հա է, որից 1113հա պտղատու այգիներ են, իսկ 179.4 հա՝ խաղողի:

Մարզում 2017թ-ին հիմնվել է նոր ինտենսիվ այգիներ, տարածքը՝ 26.8հա: Առաջին անգամ Մեղրիի տարածաշրջանում ինտենսիվ այգիների շնորհիվ արտադրվել է 80 տոննա ծիրան, որից 45 տոննան արտահանվել է հանրապետությունից դուրս:

ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու չտրամադրելու, շուկայում ցորենի գների անկման և մի շարք այլ օբյեկտիվ պատճառներով 2017թ. «Սերմ արտադրողների միություն» ՀԿ և մարզի խոշոր ֆերմերների միջոցով կազմակերպվել և իրականացվել է սերմերի արտադրության, վաճառքի աշխատանքներ: Կատարվել է աշնանացան՝ 11058.3հա, նախորդից՝ 535.3հա-ով ավել, 5278.7 հա գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքս, այդ թվում՝ ցորեն՝ 21.2 հա, գարի՝ 2999.9 հա, վարսակ՝ 16.5հա, եգիպտացորեն՝ 9.1հա, հաճար՝ 2220հա, այլ գարնանացան հացահատիկային մշակաբույսեր՝ 12հա:

Մարզի «Սերմ արտադրողների միություն» ՀԿ-ի միջոցով որոշակի աշխատանքներ են կատարվել նաև հացահատիկային, կերային և այլ մշակաբույսերի սերմարտադրության ծավալների ավելացման ուղղությամբ: Գարնանացանի համար ՍԱՄ-ի միջոցով տրամադրվել են գարնանացան ցորենի 42.0տ, գարու՝ 65.0 տ, առվույտի՝ 3.5տ, վարսակի՝ 28.0տ, կորնգանի՝ 18.5տ սերմացու: Գարնանացանը կատարվել է ագրոժամկետներին համապատասխան: Վեգետացիայի ընթացքում վերահսկվել է ցանքատարածությունների ագրոկանոնների համապատասխան մշակության գործընթացը:

Մինչև բերքահավաքի աշխատանքների սկիզբը, կազմակերպվել և ժամանակին կատարվել է սերմադաշտերի ապրորացման, հավաստագրման աշխատանքներ:

Մարզի համայնքներից ստացված պահանջարկի հիման վրա, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար, ՀՀ կառավարությանը ներկայացվել է հայտ և մարզ ներկրվել հողօգտագործողներին անհրաժեշտ 971058լ դիզվառելիք (ընդհանուր արժեքը կազմում է 266.0 մլն.դրամ), 2160 տոննա ազոտական պարարտանյութ (259,2 մլն.դրամ), 210 տոննա գարու ( 27.3 մլն.դրամ), 1,2 տոննա առվույտի և 30.1 տոննա կորնգանի սերմացու: 2017թ-ի մկնանման կրծողների դեմ պայքարի կազմակերպման նպատակով ստացվել է 1020 կգ թունանյութ (Ռոդիֆակում Ս), որի միջոցով 72 համայնքներում պայքար է կազմակերպվել 12750 հա ցանքատարածությունների վրա:

Մարզում լուրջ խնդիր է մնում հացահատիկի իրացման հարցը: Այս խնդրի լուծումը հնարավոր ենք համարում հացահատիկի ինքնարժեքի իջեցման ճանապարհով, ոչ թե ծախսերը կրճատելով, այլ լիարժեք ագրոտեխնիկայի կիրառմամբ՝ բերքատվության հավելումով:

Մարզում, հատկապես Գորիսի տարածաշրջանում, հաց արտադրող ֆերմերները այս ճանապարհով կարողացել են խնդիրը լուծել:

Մարզում հունիս ամսին տեղացած կարկտահարության հետևանքով տուժել են Գորիսի և Կապանի մի շարք համայնքներ, որոնց ՀՀ կառավարության կողմից տրվել է փոխհատուցում:

2017թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքներին և բերքահավաքին ներգրավված է եղել մարզում առկա գյուղտեխնիկայի 75%-ը:

2017 թ-ից սկսվել է ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորված վարկերի տրամադրման, լիզինգային եղանակով գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ձեռքբերման աշխատանքները:

Տարվա ընթացքում տեխնիկայի բազան որոշակի քանակությամբ թարմացվել է: Ձեռք է բերվել 2 միավոր կոմբայն և 24 միավոր տրակտոր՝ իրենց գյուղգործիքներով:

Մարզը տեխնիկական միջոցներով աջակցել է նաև Արցախում բերքահավաքի աշխատանքների իրականացմանը:

Մարզում 2017թ. կարտարված ցանքսը ամբողջովին հնձվել է: Հացահատիկի միջին բերքատվությունը մարզում կազմել է 19,5 g/հա:

Համակարգվել և օժանդակություն է ցուցաբերվել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից արտադրվող գյուղատնտեսական մթերքների (միս, կաթ, պտուղ, կարտոֆիլ, բանջար) իրացման, ինչպես նաև ոռոգման համակարգի վերանորոգման և շահագործման աշխատանքներին:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում ոռոգման ջրի անխափան մատակարարման աշխատանքներին նախապատրաստվելու գործընթացի շրջանակներում մարզի ԶՕԸ-ում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ: Ստեղծվել է ԶՕԸ-ի մարզային կենտրոն և չորս տարածքային ԶՕԸ-եր: Գրեթե ավարտին են հասցվել Մեղրիի, Կապանի, Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում գործող պոմպակայանների, ոռոգման ցանցերի վերանորոգման աշխատանքները:

Մաքրվել է ոռոգման ներքին ցանցերը, բոլոր հայտ ներկայացրած գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին տրվել է անհրաժեշտ քանակի ոռոգման ջուր: 2017 թ-ին մարզում ոռոգվող հողատարածքը կազմել է 1540հա: Մարզի ԶՕԸ-ի ուժերով գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին մատակարարվել է 6,5 մլն.խ.մ. ջուր, ոռոգման վարձավճարների գանձումները կազմել է 103,7%:

Ստորև ներկայացվում է վարձավճարների գանձումը առ. 01.01.2017թ.-01.01.2018թ.

ԶՕԸ-երի անվանումը	Ոռոգվող համայնքները	Ոռոգվող հողատարածքը	Մատակարարված ջրի քանակը /հազ.խ.մ./	Հասույթը /հազ.դրամ/	Փաստացի գանձված վարձավճարը /հազ.դրամ/	Ապարքը /հազ.դրամ/
01.01.2017թ.	1402	4977.7	54755.0	50883.7	3871.0	92.9
01.01.2018թ.	1540	6553,8	72091,8	74729,0	2637,2	103,7

2017թ. նոյեմբեր ամսում գյուղատնտեսության բնագավառում կատարվել է խոշոր հողօգտագործողների, անասնապահների, մեղվապահների, ինտենսիվ այգեգործությամբ և ձկնաբուծությամբ զբաղվողների, կոոպերատիվների, անօգտագործելի վարելահողերի գույքագրում, հաշվառում: Ընթացքի մեջ է անասնազվխաքանակի հաշվառումը, ըստ որի խոշոր եղջերավոր անասնազվխաքանակը կազմում է 54411 գլուխ, այդ թվում, կովեր՝ 25042 գլուխ, մանր եղջերավորները՝ 116772 գլուխ, որից մայրեր՝ 113432 գլուխ, խոզերի գլխաքանակը՝ 12355 գլուխ, թռչուններ՝ 141685 թև, մեղվաընտանիքների թիվը աճել է 5162-ով և հասել է 44194 փեթակի:

Մարզում 2017թ. հունվար-նոյեմբերին իրացվել է շուրջ 11.1հազար տոննա միս (կենդանի զանգվածով), արտադրվել 70.1 հազ.տոննա կաթ և 39.6 մլն հատ ծու, անցած տարվա՝ 13.0 հազար տոննա միս (կենդանի զանգվածով), արտադրվել 75.9 հազար տոննա կաթ և 44.6 մլն հատ ծու:

Անասնաբուժական ծառայության հետ համատեղ վերահսկվել և համակարգվել է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները:

Կատարվել են դիագնոստիկ ստուգումներ տուբերկուլոզ և բրուցելոզ հիվանդությունների, պրոֆիլակտիկ միջոցառումներ՝ սիբիրախտ, պաստերիոզ, դաբաղ, խոզերի ժանտախտ, թռչունների ժանտախտ, հիվանդությունների դեմ: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ժամանակին են հատկացվել բոլոր անհրաժեշտ արեպարատները:



Տարվա ընթացքում զանգվածային հիվանդություններ չեն արձանագրվել, արձանագրվել է ընդամենը խոշոր և մանր եղջերավոր անասնազվխաքանակի բրուցելոզ հիվանդություն՝ 110 գլուխ ԽԵԱ և 89 գլուխ ՄԵԱ:

Մարզում գործում է 3 տոհմային տնտեսություն: Տարվա ընթացքում կատարվել է 900 գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում:

Անասնազվխաքանակի, ինչպես նաև անասնաբուժական մթերքների ավելացման նպատակով խնդիր է դրվել արհեստական սերմնավորման ճանապարհով մայրական կազմի ավելացումը՝ տարեկան առնվազն 5%-ով: Այս կարևոր խնդիրը լուծելու համար վերապատրաստվել համապատասխան մասնագետներ (Սիսիանում-15, Գորիսում-12, Կապանում-2): Այդ գործում մեծ աջակցություն և օգնություն է ցուցաբերվում Լ ՌԶԳ ծրագրի կողմից:

Մարզում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև բնակչության և կենդանիների հետ ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով «Գյուղացիական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում սկսվել են բրուցելոզի, դաբաղի, սիբիրախտի, նոդուլյար մաշկաբորբի, խշխշան պալարի ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումները՝ սահմանված գրաֆիկի համաձայն: Հայտնաբերված հիվանդ անասնազվխաքանակը սննդի անվտանգության մարզային տեսչության մասնագետների կողմից վերցվում է հսկողության տակ և նախատեսված ժամանակահատվածում լիկվիդացվում:

Արոտային շրջանին անցնելու նպատակով անասնաբուժական ծառայության հետ համատեղ աջակցություն է ցուցաբերվել գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին պրոֆիլակտիկ միջոցառումները ժամանակին կատարելու և արոտային շրջանը կազմակերպելու համար: Առկա է խնդիր ազատագրված տարածքներում մարզին պատկանող անասնազվխաքանակները լիարժեք չհաշվառելու և կանխարգելիչ միջոցառումներից դուրս մնալու հետևանքով վարակի օջախներ առաջանալու հետ: Հետագայում յայլաղային շրջան տեղաշարժի ժամանակ այդ վարակները բերվում են մարզ: Նման երևույթներից զերծ մնալու համար ձեռնարկվում են միջոցներ ուժեղացված հսկողություն սահմանելու սահմանային այն հատուկ կետերում (Գորիսում՝ 2, Կապանում՝ 2) որտեղով կատարվելու է անասնահոտերի շարժը: Նախատեսվում է հերթապահ անասնաբուժական ծառայություն՝ ախտահանիչ միջոցներով: Շարժը կթույլատրվի միայն համապատասխան կողմից տրված փաստաթղթերի հիման վրա:

Սահմանվել է առավել ուժեղացված հսկողություն մսամթերքների վաճառքի կետերում: Մսի վաճառքը թույլատրվում է միայն փորձաքննության արդյունքներից ելնելով: Այդ նպատակով մարզի բոլոր քաղաքներում ստեղծվել է փորձաքննության լաբորատորիաներ և հսկողության վերցվել նրանց աշխատանքները: Աշխատանքներ են տարվում իսպառ վերացնելու բակային, փողոցային մսի վաճառքը: ՀՀ կառավարության հանձնարարականի համաձայն նախատեսվում է անցնել սպանդանոցային մորթի և խրախուսել սառեցված մսի վաճառքը:

Նախկինում (2012թ.) մարզին հատկացված 780 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի (124.8 մլն. դրամ) դիմաց 21.12.2016թ. դրությամբ հավաքագրվել և մատակարարի հաշվեհամարին է փոխանցվել 101.670 մլն. դրամ: Պարտքը կազմում էր 23.130 մլն.դրամ, որը մարվել է մարզպետի նախաձեռնությամբ, իսկ 2013, 2014, 2015, 2016 թվականների աշնանացան ցորենի

առաջին վերարտադրության, գարնանացանի սերմացուների և ազոտական պարարտանյութերի վճարման ենթակա 258.6 մլն. դրամ գումարից ՀՀ կառավարության կողմից մարվել է 248.5 մլն.դրամը: Այսօրվա դրությամբ պարտքը կազմում է 10.0 մլն.դրամ, որի հավաքագրման գործընթացը գտնվում է հսկողության տակ:

Դոնոր կազմակերպությունների կողմից ոլորտում իրականացվել են ավելի քան 2.3 մլրդ. դրամի ներդրումային ծրագրեր՝ ֆերմերային տնտեսություններին աջակցության, ներտնտեսային ոռոգման ցանցի և ջրամատակարարման համակարգի վերակառուցման նպատակով: Մասնավորապես՝

1) ՀՏԶՀ-ի կողմից 2017 թ-ին ԷՄՋԻԷՄ գրուպ ՍՊԸ-ի կողմից 47,6 մլն. դրամի ներդրում՝ Սիսիանի համայնքի Որոտան բնակավայրում իրականացրել է ջրընդունիչների և ջրատարի վերակառուցման համար:

2) ԳԱՄԿ-ի կողմից իրականացվել է 43,2 մլն. դրամի չափով ներդրումներ:

3) «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ կողմից 2017թ. մարզում «Անասնապահության զարգացում Հայաստանի հարավում» ծրագրերի շրջանակներում ցուցաբերվել է 230,0 հազ. դրամի աջակցություն:

Գորայք համայնքում արոտների ջրարբիացում/անասունների ջրելատեղի կառուցում՝ 7444.3 մլն.դրամ, որից համայնքի կողմից ներդրում՝ 3.2 մլն.դրամ:

Գորայք խոշորացված համայնքի համար գյուղ տեխնիկայի ձեռք բերում՝ 80.5 մլն.դրամ, որից համայնքի ներդրում՝ 8.6 մլն.դրամ:

4) ՀՀ ԿԱ «ԳՏՏԶ ՇԻԳ» ՊՀ կողմից իրականացվել է 2.22 մլրդ. դրամի ներդրում՝ ներտնտեսային ոռոգման ցանցի և ջրամատակարարման համակարգի վերակառուցման համար:

Մարզում տարբեր դոնորների ֆինանսական աջակցությամբ ուսուցումներ և խորհրդատվական աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի, ԳԱՄԿ-ի, ՓՄՁ-ԶԱԿ-ի և հասարակական այլ կազմակերպությունների կողմից:

01.01.2018թ. դրությամբ մարզում առկա 1090 տրակտորներից գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ են մարզի առկա տեխնիկայի 75%-ը: 156 հացահատիկահավաք կոմբայներից՝ 110-ը, 48 կերահավաք կոմբայներից՝ 34-ը: Գյուղատնտեսական առկա տեխնիկան հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը:

Անցած տարվա համեմատ գյուղտեխնիկայի քանակությունը ավելացել է:

Սյունիքի մարզ	Հացահատիկահավաք կոմբայն	Կերահավաք կոմբայն	Անիվավոր տրակտոր										Թրթուրավոր տրակտոր					ԸՆԴԱՄԵՆԸ	
			K-700,701	T-150k	MT 80,82	MT -50,52	M -6L	T-40	T-16, T-25	ՎՕ-2621	SAME	Ընդամենը	T-330 T-170,	T-74, DT-75	T-54, T-70	DZ-42	Այլ մակնիշի		Ընդամենը
Ընդամենը մարզում 01.01.2016	155	47	15	70	368	46	115	70	28	65	29	806	28	227	9	16	2	282	<b>1088</b>
Ընդամենը մարզում 01.01.2017	156	48	15	70	369	46	115	70	28	65	29	807	28	228	9	16	2	283	<b>1090</b>

Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, ցուցաբերվել աջակցություն բնապահպանական օրենսդրության կատարմանը, արգելանոցների և արգելավայրերի պահպանմանը և օգտագործմանը, ապահովվել համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների և մարզի «Օրիոս» բնապահպանական տեղեկատվական հասարակական կենտրոնների հետ:

Աջակցություն է ցուցաբերվել «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կենսաբազմազանության ապահովման և կայուն զարգացման ծրագրերին:

«Չանգեզուր» կենսոլորտային համալիրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնկման աշխատանքների կատարման նպատակով 2017թ. պետական բյուջեից տրամադրվել է մոտ 141.3 մլն.դրամ:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ բնապահպանության նախարարության, «Կովկասի բնության հիմնադրամ»-ի և «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ միջև 03.07.2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագրի համաձայն «Կովկասի բնության հիմնադրամ»-ի միջոցներով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում իրականացվել է մոտ 26.0 մլն. դրամ ընդհանուր արժեքով ծրագրեր:

Շարունակվում է ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և գերմանական զարգացման բանկի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում 2012թ. սկսված «Շիկահողի կենսոլորտային արգելոցի հիմնադրման և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը», որի ընդհանուր արժեքը կկազմի է 8.25 մլն եվրո:

Մշտական աջակցություն է ցուցաբերվել թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման և փոխադրման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպմանը: Մարզի առողջապահական ընկերությունները համապատասխան պայմանագրեր են կնքել վտանգավոր բժշկական թափոնների վերամշակման վնասազերծման համար:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ հաշվետու ժամանակահատվածում համատեղ աշխատանքներ են տարվել մարզի ֆլորայի և ֆաունայի պահպանման և վերարտադրման, ինչպես նաև իրավախախտումների կանխման ուղղությամբ:

Համակարգված աշխատանքներ են տարվել բնօգտագործման և բնապահպանական վճարների պատշաճ կարգով վճարումներն ապահովելու, ոլորտում արձանագրված իրավախախտումներից գոյացած վարչական տուգանքները պետբյուջե մուտքագրելու ուղղությամբ (հաշվարկված վնասների և պատժամիջոցների դիմաց 2017 թվականի ընթացքում պետբյուջե է մուտքագրվել ավելի քան 8.3 մլն. դրամ):

Աշխատանքներ են տարվել համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում ապօրինի ծառահատումների, աղբակույտերի և արտադրական թափոնների տեղափոխման ուղղությամբ: Տեղական ծրագրեր են մշակվել նաև գյուղական համայնքներում ծառատնկումների կազմակերպման, փողոցների մաքրման ուղղությամբ:

Համատեղ իրականացված ստուգայցերի արդյունքում համայնքների ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման խախտումներ չեն արձանագրվել:

Սահմանված պարբերականությամբ (ամիսը 3 անգամ) սպասարկող մարզային կազմակերպությունների կողմից մարզի միջպետական, ինչպես նաև զբոսաշրջային կենտրոններ (Տաթևի վանական համալիր, ճոպանուղի, Վահանավանք և այլն ) տանող հանրապետական նշանակության ճանապարհների և դրանց հարակից տարածքներում կատարվում են սանիտարական մաքրման աշխատանքներ: Ճանապարհների առանձին հատվածներում և բնակավայրերի մերձակայքում տեղադրվել են աղբարկղներ: Կատարված աշխատանքների արդյունքում ճանապարհների սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում:


Ապահովվել է նաև համագործակցությունը բնական պաշարների և ընդերքօգտագործման բնագավառում: Մարզի 44 հանքավայրերի (12-ը մետաղական, 32-ը ոչ մետաղական) համար տրվել են ընդերքօգտագործման լիցենզիաներ, որոնցից ներկայումս շահագործվում է 30-ը /7-ը մետաղական, 23-ը ոչ մետաղական/: Բոլոր հանքօգտագործողներն ունեն հողհատկացման և ընդերքի օգտագործման համապատասխան փաստաթղթեր:

Թվով 29 կազմակերպություն ունեն ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզիաներ:


### **Հողաշինության և հողօգտագործման բնագավառ**

Սյունիքի մարզի վարչական տարածքը կազմում է 450542 հա, կամ Հայաստանի Հանրապետության վարչական տարածքի 15.1%-ը: Սյունիքի մարզի հողային ֆոնդը՝

1. ըստ նպատակային նշանակության ունի հետևյալ պատկերը.



2. ըստ սեփականության սուբյեկտների ունի հետևյալ պատկերը.



Մարզի 306.5 հազ.հա գյուղատնտեսական նշանակության հողերից վարելահողերը կազմում են 43.8 հազ.հա, կամ 14.3%-ը: 2017թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով վարելահողերից օգտագործվել է 37.6 հազ.հա (85.8%): Բարձրադիր գոտիներում գտնվելու, մեծ թեքություններ ունենալու և տնտեսապես ոչ շահավետ լինելու պատճառներով համայնքներում չի օգտագործվել մոտ 6.2 հազ.հա վարելահող, այդ թվում՝ 4.8 հազ.հա պետական և համայնքային սեփականության:

Մարզի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 2017թ. գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով հողօգտագործողների կողմից վարձակալությամբ օգտագործվել է 43.52 հազ. հեկտարը՝ տարեկան 132.4 մլն դրամ վարձավճարով: 2017 թվականի վարձավճարի (ներառյալ ապառքներ) գանձումները կազմել են 136.1 մլն. դրամ կամ 102.8%:

2017թ. վարչական հսկողության աշխատանքների շրջանակներում մարզի թվով 4 խոշորացված և 15 նախկին համայնքներում իրականացվել են ընթացիկ ստուգումներ՝ հողօգտագործման բնագավառում հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու, պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման և օգտագործման տրամադրման գործընթացների նկատմամբ: Ստուգումների արդյունքներով արձանագրված խախտումների վերացման նպատակով, տրված պարտադիր կատարման ցուցումները կատարվել են սահմանված ժամկետում:

Ստուգումների արդյունքներով վարչական պատասխանատվություն առաջացնող խախտումներ չեն արձանագրվել:

2017թ-ին մարզի 6 համայնքների 18 բնակավայրերում (4 քաղաք և 14 գյուղ) տարբեր նպատակային նշանակության հողամասերից աճուրդ վաճառքի ձևով օտարվել է 48.08 հա հողամասեր, որից՝ 42.91 հա գյուղատնտեսական նշանակության, կամ 43.3% պակաս, քան 2016թ-ին: Հողերի օտարումից տեղական բյուջեներ են մուտքագրվել 68.0 մլն. դրամ, որը օտարված հողամասերի կադաստրային արժեքների հանրագումարը գերազանցում է 31.4 մլն.դրամով:

2017թ. ընթացքում համայնքների ղեկավարների կողմից կազմվել և ՀՀ Սյունիքի մարզպետին է առաքվել 7 բազմաբնակավայր համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության թվով 31 առաջարկներ (հողաշինարարական գործեր, 112 միավոր): Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը 2017թ. ընթացքում 29 փաթեթների վերաբերյալ տվել է դրական եզրակացություններ (79 միավոր), բացասական եզրակացությամբ հողաշինարարական գործեր չեն եղել: ՀՀ կառավարության որոշումներին (28.12.2011թ. N1918-Ն և N1920-Ն) համապատասխան միջգերատեսչական հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա համայնքների ավագանիների որոշումներով 2017թ. փոփոխվել են 7 համայնքների վարչական տարածքներում գտնվող 263.9 հա հողատարածքների նպատակային նշանակությունները՝ որը խթան կհանդիսանա ինչպես էներգետիկայի՝ այդ թվում վերականգնվող, արդյունաբերության, ընդերքօգտագործման, բջջային կապի, ջրամատակարարման, գյուղատնտեսական արտադրական և հասարակական սպասարկման ոլորտների, այնպես էլ համապատասխան համայնքների սոցիալ տնտեսական զարգացմանը: Հողամասերի նպատակային նշանակության փոփոխությամբ պայմանավորված 2017թ. հողօգտագործողների կողմից արդեն կատարվել է 178 մլն. դրամի կապիտալ ներդրումներ: 2017թ հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության արդյունքում՝ որպես կադաստրային արժեքների տարբերություն համայնքների բյուջեներ են մուտքագրվել 3.8 մլն. դրամ (100%):

Բնագավառում առկա խնդիրների կարգավորման նպատակով 2017թ. ներկայացվել է ՀՀ կառավարության 2 որոշման նախագիծ, որոնք ընդունվել են:

### **Առողջապահության բնագավառ**

2017թ. մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել մարզում գործող առողջապահական հաստատությունների համաչափ զարգացման, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության որակի, ներհիվանդանոցային ինֆեկցիայի կանխարգելման, շտապ օգնության և բուժական մեթոդաբանական կետերում ցուցաբերվող բուժօգնության որակի ու մատչելիության բարձրացման հարցերը, ինչպես նաև առողջապահական ընկերությունների նյութատեխնիկական բազայի հագեցման և կադրերով համալրման գործընթացները, ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը:

Բնակչության բժշկական բարեկեցության գնահատման համար կարևորագույն ցուցանիշներից է բնակչության բնական շարժի նկարագիրը, որն ըստ մարզի տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը.

Տարածաշրջան	Ծնունդ 2015թ.		Ծնունդ 2016թ.		Ծնունդ 2017թ.		Մահեր 2015թ.		Մահեր 2016թ.		Մահեր 2017թ.		0-1 տ. երեխաների մահեր 2015թ.	0-1տ. երեխաների մահեր 2016թ.	0-1տ. երեխաների մահեր 2017թ.
	Ըստ ծննդյան ցուցաբերող ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի	Ըստ ծննդյան ցուցաբերող ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի	Ըստ ծննդյան ցուցաբերող ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի	Ըստ ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի	Ըստ ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի	Ըստ ՓԲԸ-ի	Ըստ ֆԿԱԳԾ-ի			
Կապան	394	404	455	431	383	380	418	440	409	454	451	443	1	4	5
Քաջարան	53	85	45	82	30	59	79	79	74	74	74	76	1	2	0
Սիսիան	263	325	210	322	206	318	135	261	231	312	243	279	1	1	3
Գորիս	547	523	556	546	537	486	307	354	341	378	349	362	1	5	1
Մեղրի	76	103	68	91	60	93	115	122	76	118	69	104	0	0	0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ</b>	<b>1333</b>	<b>1440</b>	<b>1334</b>	<b>1472</b>	<b>1216</b>	<b>1336</b>	<b>1054</b>	<b>1256</b>	<b>1131</b>	<b>1336</b>	<b>1186</b>	<b>1264</b>	<b>4</b>	<b>12</b>	<b>9</b>

2017 թվականին մարզում գրանցվել է 1336 ծնունդ, ծնելիությունը կազմել է 9.6 (2016թ.`10.6) պրոմիլ և 1264 մահ՝ մահացության ցուցանիշը կազմել է 9.1 (2016թ.`9.6) պրոմիլ: Բնական աճը կազմել է 0.5 (2016թ.`1.0) պրոմիլ: Մանկական մահացությունը կազմել է 6.7 (2016թ.`8.2) պրոմիլ:

Մարզում գործում են մարզային ենթակայության 17 առողջապահական ընկերություններ և կազմակերպություններ, որոնք մատուցում են արտահիվանդանոցային, հիվանդանոցային, մասնագիտական (նյարդահոգեբուժական) դիսպասերային և շտապ օգնության ծառայություններ: Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում աշխատում է 1304 մարդ, որից 227 բժիշկ, 682 միջին բուժաշխատող: 10000 բնակչի հաշվով բուժսպասարկում են իրականացրել 16.4 բժիշկ և 49.1 միջին բուժաշխատող:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված է 420 մահճակալ:

2017 թվականին մարզի հինգ բժշկական կենտրոններում և նյարդահոգեբուժական դիսպանսերում հիվանդանոցային ստացիոնար բուժօգնություն են ստացել 11241 հիվանդներ, որից 1293 հիվանդ բուժվել են վճարովի հիմունքներով, իսկ 284 հիվանդ՝ համավճարի կիրառման սկզբունքով:

2017 թվականին մարզի բժշկական կենտրոններում ծննդալուծվել է 1216 կին, ծնվել է 1225 երեխա, 0-1 տարեկան հասակում մահացել է 9 (2016թ.` 12) երեխա, որից 2 երեխա 0-6 օրական հասակում: Արձանագրվել է 8 մեռելաձնության դեպք, պերինատալ մահացության ցուցանիշը կազմում է 8.1 պրոմիլ (2016 թ.` 11.2 պրոմիլ): Մարզում 2017 թվականին մայրական մահացության դեպք չի արձանագրվել:

2017 թվականի ընթացքում մարզում գրանցված ծնունդների 91.7% (2016 թ.` 90.6%) իրականացվել է մարզի ծննդօգնություն իրականացնող 5 բժշկական կենտրոններում: Մարզի բժշկական կենտրոններում ծննդօգնությունը իրականացնելու նպատակով 15 կնոջ տրամադրվել է ծննդօգնության հավաստագիր:



2017 թվականին առողջության առաջնային պահպանում իրականացնող հաստատություններ այցելությունների թիվը կազմել է 431631, մեկ բնակչի հաշվով հաճախումների թիվը կազմում է 3.1: Նեղ մասնագիտական և դիսպանսեր հսկողության տակ գտնվում է 22183 հիվանդ:

Սոցիալապես անապահով խմբերում չընդգրկված, սակայն ծանր սոցիալական վիճակում գտնվող մարզի 49 բնակիչներ մարզպետի միջնորդությամբ ուղեգրվել են հիվանդանոցային բուժօգնություն ստանալու կամ հետազոտվելու, որոնցից 27-ը մարզի բուժհաստատություններում, իսկ 22-ը՝ Երևանի մասնագիտացված բժշկական հաստատություններում: Առողջարանային-վերականգնողական բուժման են ուղեգրվել հաշմանդամության խումբ ունեցող 39 հիվանդներ և մանկուց հաշմանդամ՝ 5 երեխաներ:

Կազմակերպվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովման գործընթացը: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել և բաշխվել է կենտրոնացված գնումներով ձեռք բերված 63.4 մլն դրամի, իսկ մարդասիրական օգնության ճանապարհով՝ 36.2 մլն դրամի դեղորայք, բժշկական պարագաներ: 2017 թվականին մարզի բուժհաստատությունների կողմից հիվանդներին հատկացվել է 32.3 մլն. դրամի անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայք:

2017 թվականին շտապ օգնության ծառայությունը իրականացրել է 16645 կանչ, շարունակում է աճել գյուղական վայրերից ստացված և սպասարկված կանչերի թիվը:

Մարզում գործող բոլոր առողջապահական կազմակերպությունների պետական պատվերի գլոբալ բյուջեն կազմել է 2.14 մլրդ դրամ, որից 1.09 մլրդ դրամ արտահիվանդանոցային և 1.05 մլրդ դրամ հիվանդանոցային ծառայությունների գծով: 2017 թվականին պետական պատվերի գլոբալ բյուջեի կատարողականը կազմել է 2.09 մլրդ.դրամ (98.%): Ֆինանսական փոխհատուցումը իրականացվել է 100%:

Վճարովի ծառայությունները 2017 թվականին մուտքագրվել է 402,4 մլն դրամ, ինչը կազմել է հիվանդանոցային ծառայության համար նախատեսված գլոբալ բյուջեի մոտ 38%: 2016 թվականին վճարովի ծառայություններից մուտքագրվել է 144,4 մլն. դրամ, ինչը, ի տարբերություն 2017 թվականին, կազմել է 2016 թվականին հիվանդանոցային ծառայության համար նախատեսված գլոբալ բյուջեի 13%: Փաստորեն 2017 թվականին տեղի է ունեցել վճարովի ծառայությունների մուտքերի կտրուկ աճ (մոտ 3 անգամ), ինչը հիմնականում պայմանավորված է 2017 թվականին առողջապահության ոլորտում իրականացված կառավարման համակարգի բարեփոխումներով, ինչպես նաև կադրային փոփոխություններով: Ընկերությունների գործադիր մարմնի ղեկավարների փոփոխությունն ուղեկցվել է մատուցվող ծառայությունների նոր տեսակների ներդրմամբ, համակարգում ֆինանսական միջոցների սովորաբար շրջանառության դեմ արդյունավետ պայքարով:

Բնակչությանը տրամադրվող առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի բարձրացման և ոլորտի խնդիրների լուծման նպատակով ներգրավվել են նաև մի շարք միջազգային և տեղական հումանիտար կազմակերպություններ ու բարեգործական հիմնադրամներ: Այսպես.

«Սյունիքի մարզի զարգացման և ներդրման հիմնադրամ» բարեգործական կազմակերպության կողմից առողջապահության բնագավառում տարբեր ծրագրի շրջանակներում իրականացվել են 16.8 մլն դրամի ներդրումներ:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բացվել է ժամանակակից սարքավորումներով հագեցված ակնաբուժական կենտրոն, որի արժեքը կազմել է 69.8 մլն. դրամ: Միաժամանակ նույն կազմակերպության կողմից «Կուրությունը կանխարգելելու նպատակով բնակչության առանձին խմբերին կատարակտի վիրահատություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել են 4.0 մլն. դրամի համարժեք 30 վիրահատական և լազերային միջամտություններ:

«Հովարդ Կարագոյան» Բժշկական Բարեգործական Հասարակական Կազմակերպության կողմից մարզում մինչև 14 տարեկան երեխաների ատամնաբուժական, ակնաբուժական ծառայություններ մատուցելու նպատակով, լսողական խնդիրներ ունեցող երեխաներին աջակցելու ծրագրերի շրջանակներում իրականացվել են 30.0 մլն. դրամի ներդրումներ:

«Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից մարզում իրականացվել են մի շարք միջոցառումներ, ուղղված 0-5 տարեկան երեխաների առողջ սնուցմանը, ճիշտ խնամքի ու զարգացմանը, պերինատալ և նորածնային խնամքի բարելավմանը, որի արժեքը կազմել է մոտ 30.0 մլն. դրամ:

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի միջոցներով «Մարզային բժիշկների վերապատրաստում» ծրագրի շրջանակներում 8 բժիշկներ վերապատրաստվել են Երևանում:

ՄԱԿ-ի հիմնադրամի միջոցներով 2017 թվականին մարզի առողջության առաջնային պահպանում իրականացնող 154 բուժաշխատողներ (բժիշկներ և բուժքույրեր) արդի թեմաների շուրջ՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված ծրագրով անցել են 9-օրյա վերապատրաստման դասընթացներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել բժշկական բարձր որակավորում ունեցող մարզ գործուղված 18 մասնագետների համար բավարար կենցաղային և արտոնյալ աշխատանքային պայմաններ ապահովելու խնդրին:

### **Սոցիալական ապահովության բնագավառ**

2017թ. բնակչության պետական սոցիալական ապահովության տարածքային քաղաքականությունն ապահովվել է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների գործունեության կազմակերպման, սոցիալական ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման, ինչպես նաև բնակչության սոցիալապես անապահով ընտանիքների հաշվառման և բնակչության զբաղվածության ծրագրերի իրականացման միջոցով:

2017թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված են եղել 2364, իսկ սոցիալական նպաստի համակարգում՝ 1023 ընտանիք: Նախորդ տարվա համեմատ նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների թիվը պակասել է 195-ով: Ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 27.4 հազ.դրամ: Յուրաքանչյուր ամիս, 160 ընտանիք ընդգրկվել է եռամսյակային դրամական օգնության ցուցակներում, որոնց վճարվել է ամսական 18000դրամ:

Ձեռնարկվել է համապատասխան միջոցներ մարզում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման ապահովման ուղղությամբ: Կապան

քաղաքում համալիր սոցիալական ծառայությունների կենտրոն հիմնելու համար համապատասխան տարածք է առաջարկվել «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող նախկին ծննդատան շենքից, իսկ Գորիս քաղաքում համայնքի ավագանու որոշմամբ Մաշտոցի 3 հասցեում գտնվող նախկին շրջգործկոմի վարչական շենքի 1-ին և 2-րդ հարկերից 550 քմ տարածք անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ:

Տեղեկատվական բազաների համադրմամբ և կատարված ուսումնասիրությունների արդյունքով արձանագրված գերավճար գումարները սահմանված կարգով հետ է գանձվում պետական բյուջե: 2016թ. սոցիալական աջակցության 4 տարածքային գործակալությունների կողմից հետ է գանձվել մոտ 2.5 մլն. դրամ:

2017 թվականին շարունակվել է ՀԽՍՀ խնայքանկում ներդրված ավանդների փոխհատուցման աշխատանքները. փոխհատուցում է տրամադրվել 276 նպաստառու ընտանիքների՝ շուրջ 49 մլն. դրամ գումարի չափով:

44 հաշմանդամների տրվել է առողջարանային ուղեգրեր:

Կենսաթոշակային ապահովությունը հիմնականում իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍԱՊԾ-ի 4 տարածքային ստորաբաժանումների միջոցով: Մարզում հաշվառված է 27023 թոշակառու, միջին թոշակի չափը կազմում է 40000 դրամ: Հաշմանդամության կենսաթոշակ է ստանում 9660 մարդ:

Զբաղվածության 4 տարածքային կենտրոններում գրանցված 4320 աշխատանք փնտրող քաղաքացիներից 3804 ունեցել են գործազուրկի կարգավիճակ:

«Հայաստանի Հանրապետության 2017թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 30.0 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է սոցիալապես առավել անապահով քաղաքացիներին օգնություն հատկացնելուն. նշված հատկացումների հաշվին, 786 սոցիալապես անապահով քաղաքացիների տրվել է դրամական օգնություն:

«Սյունիքի մարզի զարգացման և ներդրման» հիմնադրամի կողմից սոցիալական ոլորտի տարաբնույթ խնդիրների (14 զոհված զինծառայողների ընտանիքներին ամսական 150.0 հազ.դրամ օգնություն, տրանսպորտի գնի սուբսիդավորում և այլն) լուծմանն է ուղղվել ավելի քան 88.0 մլն. դրամ:

Մարզում ոլորտի գերակա խնդիր է մնում զբաղվածության, նոր աշխատատեղերի ստեղծման և, ըստ այդմ, սոցիալական լարվածության մեղմման և բնակչության բարեկեցության աճի ապահովման հարցերը:

**Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բնագավառ**

Մարզպետարանը համակարգված աշխատանքներ է իրականացրել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովման ուղղությամբ:

Մարզում հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 1 երեխա: Առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա գտնվում է խնամատար ընտանիքում: Որպես երեխա որդեգրող թեկնածու հաշվառվել է 10 անձ, որդեգրման ենթակա երեխա՝ 1, իսկ որպես խնամատար ծնող հաշվառվել է 5 անձ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 416 երեխայի տրվել է վկայագիր:

ՀՀ կառավարության 22.09.2017թ.Ն-Ն որոշմամբ Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունը վերակազմակերպվել է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի, արդյունքում հաստատությունում գիշերով 45 երեխա վերադարձել են իրենց ընտանիք:

Մարզում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներ հաշվառված չեն: Ոստիկանության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման է վերցվել 16 իրավախախտ, հաշվառումից հանվել է 33 երեխա: Իրականացվել է նրանց ընտանիքների կարիքների գնահատում և կազմվել՝ անհատական վերականգնողական ծրագրեր: Հակասոցիալական վարք դրսևորած 19 անչափահասներ ուղղորդվել են Կապանի մանկական կենտրոն, որտեղ երեխաների հետ տարվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքներ:

Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 47 երեխաների տվյալներ մուտքագրվել է «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի «Մանուկ» բազա:

Հայ օգնության ֆոնդի հովանավորչական ծրագրում ընդգրկված միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ 237 երեխա ստացել է ֆինանսական աջակցություն:

Վուլո Վիժն միջազգային կազմակերպության աջակցությամբ 300 երեխայի ամառային հանգիստը կազմակերպվել է Հանքավանի «Զեփյուռ» ճամբարում, իսկ ՀՕՖ-ի հովանավորչական ծրագրի 35 միակողմանի ծնողազուրկ երեխայի ամառային հանգիստը՝ Հանքավանի «Արագած» ճամբարում:

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ մարզում հաշվառված 16 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանիքներին տրվել է դրամական աջակցություն:

Մարզպետարան դիմած սոցիալապես ծանր վիճակում գտնվող 34 ընտանիքի ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից տրվել են ֆինանսական աջակցություն, ինչպես նաև մարզպետի միջնորդությամբ «Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամ»-ի աջակցությամբ սոցիալապես ծանր վիճակում գտնվող 2 ընտանիք ապահովվել է բնակարանով:

Մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 641 ընտանիքի տրվել է նյութական աջակցություն:

Ապահովվել է կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության և սեռով պայմանավորված բռնության կանխարգելման 2017 թվականին նախատեսված միջոցառումների և ծրագրերի իրականացումը:

Շարունակվել է համագործակցությունը մարզում գործող երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

### Կրթության բնագավառ

2017 թվականի ընթացքում համակարգված աշխատանք է կատարվել մարզի տարածքում գործող պետական կրթական հաստատությունների գործունեության բարելավման, կառավարման արդյունավետության բարձրացման, պետական ուսումնական ծրագրերի իրականացման և կրթության որակի բարելավման ուղղությամբ:

Մարզում գործում է 118 հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 112-ը՝ մարզային ենթակայության, 6-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության:

Դպրոցական տարիքի 16373 աշակերտներ ընդգրկվել են մարզի ուսումնական հաստատություններում: Մարզային ենթակայության 112 հանրակրթական ուսումնական հաստատություններում կոմպլեկտավորվել է 1020.75 դասարան՝ 14553 աշակերտով, որից 288-ը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 21 աշակերտ 2017 թվականին ստացել է տնային ուսուցում:

Մարզում հաշվառված նախադպրոցական տարիքի 6378 երեխայից 4087-ը ընդգրկվել է մարզի թվով 48 նախադպրոցական ուսումնական հաստատություններում, իսկ 134-ը՝ թվով 15 այլընտրանքային նախակրթարաններում:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով, համակարգիչների թիվը կազմում է 1310: Մեկ դպրոցում միջին հաշվով առկա է 11 համակարգիչ, իսկ յուրաքանչյուր 100 երեխային բաժին է ընկնում միջինը 9 համակարգիչ:

23 դպրոցում գործում են ռոբոտաշինության լաբորատորիաներ:

Մարզի բոլոր դպրոցներն ընդգրկված են Հայաստանի կրթական /ՀԴԻՑ/ և Dasaran.am միջդպրոցական ինտերակտիվ ցանցերում, ունեն իրենց պաշտոնական կայքերը, որտեղ սահմանված կարգով տեղադրվում են եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Ուսումնական տարվա ընթացքում մարզի 3՝ Մեղրիի թիվ 2 և Աճանանի ու Հարթաշենի միջնակարգ դպրոցներն առցանց դասեր են անցկացրել Սիսիանի ավագ դպրոցի հետ:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել հատուկ կրթական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու աշխատանքների շարունակականությունն ապահովելու ուղղությամբ:

2017 թվականից մարզում ներդրվեց ուսուցչի օգնականի ինստիտուտը: 132 ուսուցչի օգնականի և 22 հատուկ մանկավարժի հաստիքներն առաջնահերթ կարգով լրացվեցին հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում՝ առանց համապատասխան աշխատանքի մնացած փորձառու մասնագետներով:

2017թ օլիմպիադաների մարզային փուլին մասնակցել է 778, իսկ հանրապետական փուլին՝ 100 աշակերտ: Հանրապետական փուլի մասնակից աշակերտներից 33-ը գրավել են մրցանակային տեղեր:

2016-2017 ուսումնական տարում միջնակարգ կրթության շրջանավարտների թիվը կազմել է 1071 աշակերտ, որոնցից 617-ը կամ 58%-ը ներկայացրել է միասնական քննության հայտ: Իններորդ դասարանը ավարտել են 1410 աշակերտ, որոնք հաջողությամբ հանձնել են ավարտական և պետական ավարտական քննությունները:

2017թ. «Գերազանցության մեդալի» հավակնորդ 39 աշակերտից 33-ը, նախորդ տարվա 31-ի դիմաց, կարողացել են հաջողությամբ հաղթահարել քննական շեմը և արժանացել գերազանցության մեդալի:

2017 թվականին բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման ընդունելության քննությունների պահուստային տեղերի մրցույթին մասնակցելու համար ուղեգիր է տրվել մարզի 6 շրջանավարտի:

Սահմանված կարգով կազմակերպվել և անց են կացվել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» և «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթները: «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթի եզրափակիչ՝ հանրապետական փուլում հաղթող է ճանաչվել մարզի Եղեգի միջնակարգ դպրոցի տնօրեն Մ. Գանդալյանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի առաջարկությամբ և կրթության ու գիտության նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական առարկաների և դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» մրցույթի եզրափակիչ փուլում մարզը ներկայացնող թվով երկու ուսուցիչ արժանացել են պատվոգրերի:

2017 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից Սյունիքի մարզի հանրակրթական դպրոցներում կատարված ստուգման արդյունքում խախտումներ են արձանագրվել մարզի 18 դպրոցներում, որոնց արդյունքում 5 դպրոցի տնօրենների նկատմամբ կիրառվել է «նկատողություն», իսկ 6 դպրոցի տնօրենների նկատմամբ՝ «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2017թ. օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 7-ը ՀՀ կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում և մարզային ենթակայության 112 հանրակրթական ուսումնական հաստատություններում ՀՀ կրթության պետական տեսչության կողմից իրականացվել է ուսումնասիրություններ, որի արդյունքում արձանագրված թերություններն հիմնականում վերաբերվել են մանկավարժական համապատասխան կադրերի ընտրությանը: Մարզի հանրակրթական, հիմնականում գյուղական սակավաթիվ աշակերտներ ունեցող դպրոցներում առկա ուսուցչի թափուր աշխատատեղերը համալրելու համար դպրոցներում պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, սակայն մասնագետ չլինելու պատճառով դրանք չեն համալրվել:

Կազմակերպվել և համակարգվել է մարզի տարածքում նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության 2017թ. հանրապետական ռազմամարզական, ՀՀ դպրոցականների 1-6-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացվող «ԱԺ գավաթի խաղարկության», ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 26-րդ մարզական

խաղերը: Կազմակերպվել և անցկացվել է դպրոցականների շախմատի հանրապետական 12-րդ օլիմպիադայի տարածքային փուլը:

Մարզի հանրակրթական դպրոցների շուրջ 75 աշակերտ մասնակցել են «Մշակութային կազմակերպություն-դպրոց» աբոնեմենտային ծրագրով Երևան քաղաքում կազմակերպված գիտաճանաչողական եռօրյա արշավներին:

Մարզպետարանի և կրթության ազգային ինստիտուտի Կապանի և Գորիսի մասնաճյուղերում իրականացվել են մարզի հանրակրթական հաստատությունների ուսուցիչների, դասվարների, ՆՈՒՀ-երի տնօրենների և դաստիարակների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստվել է 1231 մանկավարժ:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացված հայտի հիման վրա 2017 թվականի ընթացքում ատեստավորվել է 365 ուսուցիչ:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և շախմատի ակադեմիայի հետ համատեղ 2017 թվականի ընթացքում կազմակերպվել և անց են կացվել վերապատրաստման և որակավորման դասընթացներ շախմատ դասավանդող ուսուցիչների համար:

2017 թվականի ընթացքում շարունակվել են դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական կարողությունների բարձրացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

